ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հաստատվել է՝

ԵՊԲՀ Գիտական խորհրդի 02.12.2015
թվականի թիվ 06 որոշմամբ,
Գիտական խորհրդի 25.03.2026 թվականի
թիվ 26-03-03-10 որոշմամբ հաստատվել է
նոր խմբագրությամբ

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Ամփոփիչ ատեստավորման մասին» կանոնակարգով սահմանվում են բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառություն ստացած շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հետ կապված հարաբերությունները:

2. Դեղագիտական ֆակուլտետի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման առանձնահատկությունները սահմանվում են նաև «Դեղագիտական ֆակուլտետի մագիստրոսական թեզերի պաշտպանության մասին» կանոնակարգով:

3. Հանրային առողջության ֆակուլտետի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման առանձնահատկությունները սահմանվում են «Հանրային առողջության ֆակուլտետի մագիստրոսական թեզերի պաշտպանության մասին» կանոնակարգով:

4. Ամփոփիչ ատեստավորման գործընթացի նպատակը շրջանավարտի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն է:

5. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական

կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտ-ների ամփոփիչ ատեստավորման» կարգը հաստատելու մասին թիվ 1282-Ն հրամանը, Համալսարանի կանոնադրությունը, սույն կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

Հոդված 2. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը

1. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը (նախագահի, տեղակալի և անդամների կազմով) կազմավորվում է ըստ որակավորման մակարդակների, յուրաքանչյուր մասնագիտության կամ կրթական ծրագրի գծով՝ ուսուցման բոլոր ձևերի համար:

2. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին համապատասխան ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ նշանակում է ռեկտորը՝ տվյալ ոլորտի (բնագավառի) ակադեմիական հաստա-տությունների, գործընկեր կազմակերպությունների՝ գիտական աստիճան և (կամ) կոչում ունեցող մասնագետներից:

3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատում է Համալսարանի ռեկտորը՝ ամփոփիչ ատեստավորման մեկնարկից առնվազն երեք շաբաթ առաջ:

4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի ակադեմիական հաստատությունների և գործատուների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի դեկանը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է հանձնա-ժողովի քարտուղարը, ով Համալսարանի աշխատող է և հանձնաժողովի անդամ չի հանդիսանում:

5. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նախագահի պարտականություններն իրականացնում է նախագահի տեղակալը:

6. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, Համալսարանի մեթոդական ուղեցույցներով:

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն են՝

1) ստուգել շրջանավարտի պատրաստվածության մակարդակի համա-պատասխանությունը տվյալ մասնագիտության կրթական ծրագրով սահմանված նպատակներին և վերջնարդյունքներին,

2) կայացնել որոշում ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու (կամ չշնորհելու) և նրան բարձրագույն կրթության համապատասխան դիպլոմ տալու (կամ չտալու) վերաբերյալ,

3) մշակել և ներկայացնել առաջարկություններ տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման վերաբերյալ:

8. Յուրաքանչյուր ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը, որը համաձայնեցվում է հանձնաժողովի նախագահի հետ, ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ հաստատում է ռեկտորը և ամփոփիչ ատեստավորումների ու մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ տեղեկացվում է շրջանավարտներին:

9. Ռազմաբժշկական ֆակուլտետի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման «Ռազմական բժշկություն» առարկայի քննական հանձնաժողովի կազմը հաստատվում է ՀՀ Պաշտպանության նախարարի և ռեկտորի համատեղ հրամանով:

Հոդված 3. Ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը

1. Ամփոփիչ ատեստավորմանը թույլատրվում են այն շրջանավարտները, ովքեր ավարտել են բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով ուսուցումը և կուտակել են համապատասխան կրեդիտներ և Համալսարանի հանդեպ ֆինանսական պարտավորություններ չունեն: Ամփոփիչ ատեստավորման ենթակա շրջանավարտների ցանկը հաստատվում է ռեկտորի հրամանով:

Ամփոփիչ ատեստավորման կամ մագիստրոսական թեզի պաշտպանությունն անցկացվում է ուսումնական պլանով սահմանված ժամկետներում:

2. Ամփոփիչ ատեստավորումը կամ մագիստրոսական թեզի պաշտպանությունն անցկացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Նախագահի կամ նախագահի տեղակալի ներկայությունը պարտադիր է: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից կազմվող արձանագրությունների և այլ անհրաժեշտ փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատում է Համալսարանի ռեկտորը:

3. Ամփոփիչ ատեստավորումը ներառում է՝

1) Ընդհանուր բժշկության ֆակուլտետի «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորում շնորհելու համար քննություններ՝ «Վիրաբուժական հիվանդություններ», «Ներքին հիվանդություններ», «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» առարկաներից,

2) Ռազմաբժշկական ֆակուլտետի «Բուժական գործ զինված ուժերում» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորում շնորհելու համար քննություններ՝ «Վիրաբուժական հիվանդություններ», «Ներքին հիվանդություններ», «Ռազմական բժշկություն» (ռազմադաշտային վիրաբուժություն, ռազմադաշտային թերապիա, անձնակազմի բժշկական ապահովման կազմակերպում, բժշկական ծառայության կազմակերպում և մարտավարություն) առարկաներից,

3) Ստոմատոլոգիական ֆակուլտետի «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ «Բժիշկ ստոմատոլոգ» որակավորում շնորհելու համար քննություններ՝ «Թերապևտիկ ստոմատոլոգիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա» առարկաներից,

4. Համալսարանի ընդհանուր բժշկության, ռազմաբժշկական ֆակուլտետների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը բաղկացած է հետևյալ 3 փուլերից՝

1) գործնական ունակությունների գնահատում: Այն իրականացվում է «Օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական քննության» ձևաչափով (այսուհետ՝ ՕԿԿՔ (Objective Structured Clinical Examination, կրճատ՝ OSCE)) և ատեստավորվում է ստուգարքով:

2) առարկայական համակարգչային թեստավորում,

3) առարկայական բանավոր քննություն:

Սույն կետով նշված փուլերն իրականացվում են վերը նշված հաջորդականությամբ: Տվյալ առարկայի ատեստավորման յուրաքանչյուր փուլի դրական արդյունքն ապահովում է հաջորդ փուլին ուսանողի մասնակցության իրավունքը: Յուրաքանչյուր առարկայի վերջնական գնահատականը ձևավորվում է երեք փուլերի դրական արդյունքների առկայության դեպքում: Ընդհանուր բժշկության ֆակուլտետի «Բուժական գործ», ռազմաբժշկական ֆակուլտետի «Բուժական գործ զինված ուժերում» մասնագիտությունների դեպքում յուրաքանչյուր առարկայի վերջնական գնահատականը (10 միավոր համակարգով) ձևավորվում է ատեստավորման փուլերին հատկացված հետևյալ համամասնությամբ՝

1) առարկայական համակարգչային թեստավորում՝ 50 տոկոս,

2) առարկայական բանավոր քննություն՝ 50 տոկոս:

5. Գործնական ունակությունների ատեստավորման պահանջներն են.

Ընդհանուր բժշկության, ռազմաբժշկական ֆակուլտետների շրջանավարտների գործնական ունակությունները ատեստավորվում են ՕԿԿՔ ձևաչափով, համաձայն հետևյալ պահանջների.

1) ատեստավորումն իրականացվում է երկու զուգահեռ շղթաներով, յուրաքանչյուրում 12-ական կայաններում (սենյակներում)՝ «Ներքին հիվանդութիւններ», «Վիրաբուժական հիվանդություններ», «Անհետաձգելի բուժօգնություն», «Մանկաբարձության և գինեկոլոգիա» առարկաներից նախատեսված առաջադրանքների կատարման հիման վրա:

2) Ռազմաբժշկական ֆակուլտետի շրջանավարտները «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» առարկայով չեն ատեստավորվում:

3) գործարկվող կայաններից երկուսը նախատեսված են հանգստի համար:

4) մինչ ատեստավորման մեկնարկը, յուրաքանչյուր ուսանող գրանցվում է, ստանում է անհատական համարանիշ և կայաններ մուտք գործելու անհատական հերթականության սխեմա.

5) յուրաքանչյուր խմբի մուտքից առաջ պատահականության սկզբունքով ընտրվում է կայանների առաջադրանքների փաթեթը.

6) խմբի բոլոր ուսանողների համար տարբեր կայաններ մուտքի և ելքի ազդարարումը կատարվում է միաժամանակ.

7) յուրաքանչյուր կայանում նախատեսված առաջադրանքը դրվում է սեղանին, նախապատրաստված են համապատասխան առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ միջոցներն ու պարագաները.

8) յուրաքանչյուր կայանում առաջադրանքը կատարելու համար ընդհանուր բժշկության, ռազմաբժշկական ֆակուլտետների ուսանողներին հատկացվում է 5 րոպե: Յուրաքանչյուր կայանում առկա է էլեկտրոնային ժամացույց, որը հետհաշվարկային սկզբունքով ցույց է տալիս մնացած ժամանակը: Տվյալ կայանի առաջադրանքի կատարումը սահմանված ժամանակից շուտ ավարտելու դեպքում ուսանողն իրավունք չունի լքելու կայանը, մինչև ամրագրված ժամանակի ավարտը և սպասում է կայանից ելքի թույլտվության ազդանշանին, հակառակ դեպքում՝ ուսանողը զրկվում է հաջորդ կայան մտնելու հնարավորությունից.

9) տվյալ կայանում առաջադրանքի կատարման համար սահմանված ժամանակի ավարտից հետո ուսանողը պարտավոր է անմիջապես լքել ընթացիկ կայանը (նաև առաջադրանքի կատարումը ավարտին չհասցնելու դեպքում) և սահմանված ժամկետում տեղափոխվել հաջորդ կայան՝ թույլատրող ազդանշանի հրահանգով, հակառակ դեպքում՝ ուսանողը զրկվում է հաջորդ կայան մտնելու հնարավորությունից.

10) շրջանավարտի գործնական ունակությունների ատեստավորման փուլը համարվում է ավարտված պարտադիր բոլոր կայաններ մուտք և ելք կատարելուց հետո.

11) գործնական ունակությունների ատեստավորման համար սահմանված ժամանակահատվածում շրջանավարտն իրավունք չունի դուրս գալ քննական տարածքից, արգելվում է քննության ընթացքում հեռախոսների կամ այլ օժանդակ տեխնիկական միջոցների, հուշաթերթերի, գրքերի կիրառումը կամ կրումը, միմյանց հուշելը, հարցեր տալը,

12) գործնական ունակությունների ատեստավորման ողջ ընթացքը տեսաձայնագրվում է.

13) յուրաքանչյուր առարկայի գործնական ունակությունների ատեստավորումը համարվում է ստուգված, եթե տվյալ առարկայի բոլոր կայանների ենթաառա-ջադրանքների գնահատականների գումարը կազմում է առավելագույն գնահատականի առնվազը 51 տոկոսը:

Ընդհանուր բժշկության և ռազմաբժշկական ֆակուլտետներում յուրաքանչյուր առարկայի գործնական ունակությունների ատեստավորումը գնահատվում է 1-ից 10 միավորային համակարգով: Յուրաքանչյուր կայանի իրավիճակային խնդրի ենթաառաջադրանքները գնահատվում են ըստ վերջիններիս բարդության աստիճանի, տասնորդական թվերի ճշտությամբ՝ գնահատվելով նվազագույնը 0,1 բալ:

«Ներքին հիվանդություններ» առարկայի գործնական ունակություններն ատեստավորվում են հետևյալ 4 կայանների միջոցով՝

կարդիոլոգիա,

գաստրոէնտերոլոգիա,

պուլմոնոլոգիա,

նեֆրոլոգիա:

Կայաններից յուրաքանչյուրի առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 2.5 միավոր (գումարային 10 միավոր):

«Վիրաբուժություն» առարկայի գործնական ունակությունները ատեստավորվում են 4 կայանների միջոցով, որոնցից մեկը անհետաձգելի բուժօգնության կայանն է: Յուրաքանչյուրի կայանի առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 2.5 միավոր (գումարային 10 միավոր):

«Մանկաբարձություն և գինեկոլոգիա» առարկայի գործնական ունակություններն ատեստավորվում են հետևյալ 2 կայանների միջոցով՝

մանկաբարձություն,

գինեկոլոգիա:

Յուրաքանչյուր կայանի առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 5 միավոր (գումարային 10 միավոր):

14) գործնական ունակությունների ատեստավորման համար նախատեսված առաջադրանքների սահմանված անհրաժեշտ քանակության և բովանդակության պատասխանատվությունը կրում է համապատասխան ամբիոնի վարիչը.

6. Համալսարանի ստոմատոլոգիական ֆակուլտետի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը բաղկացած է հետևյալ 3 փուլերից՝

1) գործնական ունակությունների գնահատում: Ստոմատոլոգիական ֆակուլտետում իրականացվում է «Օբյեկտիվ կառուցվածքային կլինիկական քննության» ձևաչափով (այսուհետ՝ ՕԿԿՔ (Objective Structured Clinical Examination, կրճատ՝ OSCE)): Ստոմատոլոգիական ֆակուլտետում շրջանավարտների գործնական ունակությունները ատեստավորվում են քննությունով:

2) առարկայական համակարգչային թեստավորում,

3) առարկայական բանավոր քննություն:

Սույն կետով նշված փուլերն իրականացվում են վերը նշված հաջորդականությամբ։ Տվյալ առարկայի ատեստավորման յուրաքանչյուր փուլի դրական արդյունքն ապահովում է հաջորդ փուլին ուսանողի մասնակցության իրավունքը։ Յուրաքանչյուր առարկայի վերջնական գնահատականը ձևավորվում է երեք փուլերի դրական արդյունքների առկայության դեպքում:

Ստոմատոլոգիական ֆակուլտետի «Ստոմատոլոգիա» մասնագիտության յուրաքանչյուր առարկայի վերջնական գնահատականը (10 միավոր համակարգով) ձևավորվում է ատեստավորման փուլերին հատկացված հետևյալ համամասնությամբ՝

1) գործնական ունակությունների ատեստավորում 10 տոկոս,

2) առարկայական համակարգչային թեստավորում՝ 40 տոկոս,

3) առարկայական բանավոր քննություն՝ 50 տոկոս:

7. Գործնական ունակությունների ատեստավորման պահանջներն են.

Ստոմատոլոգիական ֆակուլտետի շրջանավարտների գործնական ունակությունները ատեստավորվում են ՕԿԿՔ ձևաչափով, համաձայն հետևյալ պահանջների.

1) Ստոմատոլոգիական ֆակուլտետում գործնական ունակությունների ատեստավորումն իրականացվում է 7-13 (1-2 շաբաթ) կայաններում (սենյակներում)՝ «Թերապևտիկ ստոմատոլոգիա», «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա» առարկաներից

նախատեսված առաջադրանքների հիման վրա՝ ելնելով կրթական ծրագրի վերջնարդյունքներում նախատեսված գործնական հմտությունների և առարկաներին հատկացված կրեդիտների չափաբաժիններից: Գործարկվող կայաններից մեկը նախատեսված է հանգստի համար: Յուրաքանչյուր առարկայի գործնական ունակությունները ատեստավորվում են 2-ական կայաններում՝ գումարային 1-ից 10 միավորային համակարգով: Յուրաքանչյուր կայանի առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 5 միավոր, իսկ տվյալ կայանի իրավիճակային խնդրի ենթաառաջադրանքներից (թվով 5) յուրաքանչյուրը գնահատվում է 1 միավոր:

2) մինչ ատեստավորման մեկնարկը, յուրաքանչյուր ուսանող գրանցվում է, ստանում է անհատական համարանիշ և կայաններ մուտք գործելու անհատական հերթականության սխեմա.

3) յուրաքանչյուր խմբի մուտքից առաջ պատահականության սկզբունքով ընտրվում է կայանների առաջադրանքների փաթեթը.

4) խմբի բոլոր ուսանողների համար տարբեր կայաններ մուտքի և ելքի ազդարարումը կատարվում է միաժամանակ.

5) յուրաքանչյուր կայանում նախատեսված առաջադրանքը դրվում է սեղանին, նախապատրաստված են համապատասխան առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ միջոցներն ու պարագաները.

6) յուրաքանչյուր կայանում առաջադրանքը կատարելու համար ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսանողներին հատկացվում է 6 րոպե ժամանակ՝ ելնելով նեղ մասնագիտական առանձնահատկություններից: Յուրաքանչյուր կայանում առկա է էլեկտրոնային ժամացույց, որը հետհաշվարկային սկզբունքով ցույց է տալիս մնացած ժամանակը: Տվյալ կայանի առաջադրանքի կատարումը սահմանված ժամանակից շուտ ավարտելու դեպքում ուսանողն իրավունք չունի լքելու կայանը, մինչև ամրագրված ժամանակի ավարտը և սպասում է կայանից ելքի թույլտվության ազդանշանին, հակառակ դեպքում՝ ուսանողը զրկվում է հաջորդ կայան մտնելու հնարավորությունից.

7) տվյալ կայանում առաջադրանքի կատարման համար սահմանված ժամանակի ավարտից հետո ուսանողը պարտավոր է անմիջապես լքել ընթացիկ կայանը (նաև առաջադրանքի կատարումը ավարտին չհասցնելու դեպքում) և սահմանված ժամկետում տեղափոխվել հաջորդ կայան՝ թույլատրող ազդանշանի հրահանգով, հակառակ դեպքում՝ ուսանողը զրկվում է հաջորդ կայան մտնելու հնարավորությունից.

8) շրջանավարտի գործնական ունակությունների ատեստավորման փուլը համարվում է ավարտված պարտադիր բոլոր կայաններ մուտք և ելք կատարելուց հետո.

9) գործնական ունակությունների ատեստավորման համար սահմանված ժամանակահատվածում շրջանավարտն իրավունք չունի դուրս գալ քննական տարածքից, արգելվում է քննության ընթացքում հեռախոսների կամ այլ օժանդակ տեխնիկական միջոցների, հուշաթերթերի, գրքերի կիրառումը կամ կրումը, միմյանց հուշելը, հարցեր տալը,

10) գործնական ունակությունների ատեստավորման ողջ ընթացքը տեսաձայնագրվում է.

11) Ստոմատոլոգիական ֆակուլտետում յուրաքանչյուր առարկայի գործնական ունակությունների փուլը համարվում է ատեստավորված, եթե տվյալ առարկայի բոլոր կայանների ենթաառաջադրանքների գնահատականների գումարը կազմում է առավելագույն գնահատականի առնվազը 50 տոկոսը:

12) գործնական ունակությունների ատեստավորման համար նախատեսված առաջադրանքների սահմանված անհրաժեշտ քանակության և բովանդակության պատասխանատվությունը կրում է համապատասխան ամբիոնի վարիչը.

- գործնական ունակությունների ատեստավորման գործընթացում շրջան-ավարտի ինքնազգացողության վատթարացման դեպքում շրջանավարտը պարտավոր է դիմել ատեստավորման պատասխանատուներից մեկին՝ բժշկական օգնություն ստանալու և (կամ) քննությունը դադարեցնելու հարցով: Պատասխանատուն պարտավոր է կասեցնել ատեստավորումը և հրավիրել հերթապահ բժշկին.

- բժիշկն արձանագրում է շրջանավարտի ինքնազգացողության վիճակը և, օգնություն ցուցաբերելուց հետո, ներկայացնում է գրավոր կարծիք՝ գործնական ունակությունների ստուգման գործընթացին շրջանավարտի մասնակցությունը շարունակելու հնարավորության կամ անհնարինության մասին: Բժշկի կարծիքի հաշվառմամբ Համալսարանի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը որոշում է՝ շրջանավարտի ատեստավորումը շարունակել նույն օրը ընդհատված կայանից (եթե թույլ են տալիս աշխատանքային ժամերը) կամ վերսկսվել հաջորդ օրը՝ ատեստավորման կայանների նոր առաջադրանքներով:

8. Համալսարանի դեղագիտական ֆակուլտետի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը բաղկացած է հետևյալ փուլերից.

1) «Ֆարմացիա» մասնագիտությամբ «Ֆարմացիայի բակալավր» որակավորում շնորհելու համար ամփոփիչ ավարտական ատեստացիան իրականացվում է երկու փուլով: Առաջին փուլը գործնական ունակությունների ստուգումն է, որն ավարտվում է ստուգարքով և երկրորդ փուլը միջառարկայական համակարգչային թեստային քննությունը՝ «Դեղագործական տեխնոլոգիա», «Դեղագործության կառավարում և էկոնոմիկա», «Դեղագործական քիմիա» առարկաներից: Ամփոփիչ միջառարկայական թեստային քննությունների ժամանակ շրջանավարտի թեստային փաթեթը պարունակում է 100 թեստային հարց, որից դրական է համարվում առնվազն 51 ճիշտ պատասխանը: Թեստային քննության գնահատականը ամբողջացվում է:

Դեղագիտական ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով շրջանավարտների գործնական ունակությունները ատեստավորվում են համաձայն հետևյալ պահանջների՝

ա. յուրաքանչյուր առարկայից շրջանավարտի գործնական ունակությունները ատեստավորվում են՝ ըստ ուսանողի կողմից ընտրված տոմսի: Քննական տոմսն ընդգրկում է երկու հարց:

բ. շրջանավարտն իրավունք ունի քննական տոմս վերցնելու մեկ անգամ՝ առանց փոխելու իրավունքի.

գ. պատրաստվելու համար շրջանավարտին տրվում է 5 րոպե,

դ. դեղագիտական ֆակուլտետներում գործնական ունակությունների փուլն ատեստավորվում է ստուգարքով,

ե. շրջանավարտի գիտելիքները գնահատվում են՝ ըստ հանձնաժողովի անդամ-ների կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականի, որը չի ամբողջացվում:

2) «Ֆարմացիա» մասնագիտությամբ «Ֆարմացիայի մագիստրոս» որակավորում շնորհելու համար իրականացվելու է մեկ միջառարկայական համակարգչային թեստային քննություն՝ կրթական ծրագրի հետևյալ՝ «Դեղագործական տեխնոլոգիա», «Դեղագործական քիմիա», «Դեղա-գործության կառավարում և էկոնոմիկա» առարկաներից և մագիստրոսական թեզի պաշտպանություն:

Ամփոփիչ միջառարկայական թեստային համակարգչային քննության ժամանակ շրջանավարտի թեստային փաթեթը պարունակում է 100 թեստային հարցում, որից դրական է համարվում առնվազն 51 ճիշտ պատասխանը:

9. Համալսարանի Հանրային առողջության ֆակուլտետի շրջան-ավարտների ամփոփիչ ատեստավորումը բաղկացած է հետևյալ կարգով.

1) «Հանրային առողջություն և առողջապահություն» մասնագիտությամբ «Հանրային առողջապահության մագիստրոսի» որակավորում շնորհելու համար անցկացվում է մեկ միջառարկայական համակարգչային քննություն՝ համապատասխան կրթական ծրագրի մասնագիտական առարկաներից և մագիստրոսական թեզի պաշտպանություն:

2) Հանրային առողջության ֆակուլտետի «Բիզնես վարչարարություն» մասնա-գիտությամբ «Բիզնես վարչարարություն» որակավորում շնորհելու համար նախատեսվում է միայն մագիստրոսական թեզի պաշտպանություն:

Ամփոփիչ միջառարկայական թեստային համակարգչային քննության ժամանակ շրջանավարտի թեստային փաթեթը պարունակում է 100 թեստային հարցում, որից դրական է համարվում առնվազն 51 ճիշտ պատասխանը:

10. Ամփոփիչ ատեստավորման առարկայական համակարգչային թեստային քննությունը կազմակերպվում է համաձայն Համալսարանի «Էլեկտրոնային թեստային քննությունների և հարցումների կազմակերպման կանոնակարգի»: Առարկայական թեստերը կազմվում են հիմք ընդունելով Համալսարանի «Բարձրագույն կրթության կազմակերպման մասին» կանոնակարգի պահանջները:

11. Բոլոր ֆակուլտետներում առարկայական բանավոր քննությունն անցկացվում է համաձայն հետևյալ պահանջների՝

1) տոմսն ընդգրկում է երեք հարց,

2) շրջանավարտն իրավունք ունի քննական տոմս վերցնելու մեկ անգամ՝ առանց տոմսը փոխելու իրավունքի,

3) հանձնաժողովի անդամների լրացուցիչ կամ ուղղորդող հարցերը պետք է լինեն տոմսում ընդգրկված հարցերի շրջանակներում,

4) շրջանավարտի գիտելիքները գնահատվում են՝ ըստ հանձնաժողովի անդամների կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականի, որը չի ամբողջացվում,

5) քննական տոմսի հարցերին նախապատրաստվելու համար յուրաքանչյուր շրջանավարտին տրվում է 20 րոպե ժամանակ,

6) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներին հատկացվում է մինչև 15 րոպե՝ շրջանավարտի պատասխանը լսելու, նրան հարցեր ուղղելու և պատասխաններ ստանալու համար,

7) հանձնաժողովի բոլոր անդամները միաժամանակ լսում են միայն մեկ շրջանավարտի պատասխան,

8) շրջանավարտը պարտավոր է քննության ընթացքում պահպանել ակադեմիական ազնվություն,

9) քննական օրվա տևողությունը չպետք է գերազանցի 8 ժամը:

Եթե շրջանավարտը հանձնաժողովին հայտնում է, որ հրաժարվում է բանավոր քննության հարցերին պատասխանելուց, բանավոր քննության արդյունքն արձանագրվում է, որպես բացասական պատասխան (գնահատվելով 1 միավոր):

12. Սովորողների կողմից Համալսարանի ներքին կարգապահական կանոնների խախտման դեպքում ուսանողի քննությունը դադարեցվում է, ուսանողը համարվում է չատեստավորված՝ անկախ նախօրոք տրված պատասխանի բովանդակությունից և ծավալից:

13. Ամփոփիչ ատեստավորման գնահատականների ամբողջացումը կատարվում է մեկ անգամ՝ առարկայական բանավոր քննություններից հետո, ըստ ատեստավորման փուլերի համար սահմանված գնահատման չափաբաժինների:

14. Առարկայական բանավոր քննության և (կամ) թեզի պաշտ-պանության անբավարար գնահատականի դեպքում, որպես վերջնական գնահատական, նշանակվում է առարկայական բանավոր քննության կամ թեզի պաշտպանության բացասական նիշը:

15. Ամփոփիչ ատեստավորման առարկայական քննությունների հարցաշարերը կազմում են մասնագիտական ամբիոնները՝ տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքերի հիման վրա մշակված առարկայական ծրագրերին համապատասխան: Դրանք հաստատվում են ֆակուլտետների ուսումնագիտական խորհուրդներում և համապատասխան ամբիոնների կողմից շրջանավարտներին են տրամադրվում ամփոփիչ ատեստավորումից 3 ամիս առաջ: Առարկայական բանավոր քննությունների տոմսերը հաստատվում են ֆակուլտետների ուսումնագիտական խորհուրդներում՝ ամփոփիչ ատեստավորման մեկնարկից մեկ ամիս առաջ:

16. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը կազմակերպվում է հետևյալ կանոններով՝

1) Դեղագիտական ֆակուլտետի «Ֆարմացիայի մագիստրոս» որակավորման աստիճանի շնորհման համար սահմանվում է «Ֆարմացիա» մասնագիտությամբ մագիստրոսական թեզի պաշտպանություն, որը կազմակերպվում է համապատասխան կանոնակարգով.

2) Հանրային առողջության ֆակուլտետի կրթական ծրագրերի ամփոփիչ մագիստրոսական թեզի պաշտպանությունը կազմակերպվում է

«Հանրային առողջության ֆակուլտետի մագիստրոսական թեզերի պաշտպանության մասին» կանոնակարգով.

17. Մագիստրոսական թեզ պաշտպանող շրջանավարտի վերջնական գնահատականը ձևավորվում է համակարգչային թեստային քննության և մագիստրոսական թեզի գնահատականից: Մագիստրոսական թեզի գնահատականը ձևավորվում է գրավոր և բանավոր ներկայացման գնահատականների միջին թվաբանականից, որը չի ամբողջացվում: Ամբողջացվում է միայն վերջնական նիշը: Այս կանոնը բացառություն է «Բուժհաստատությունների կառավարում» մասնագիտացման համար, որի դեպքում վերջնական գնահատականը ձևավորվում է մագիստրոսական թեզի գրավոր և բանավոր ներկայացման գնահատականների միջին թվաբանականից: Արդյունքում ստացվող նիշն ամբողջացվում է:

18. Մագիստրոսական թեզի պաշտպանությունն անցկացվում է ըստ հետևյալ պահանջների՝

1) մագիստրոսական թեզի բովանդակությունը բանավոր ներկայացնելու համար յուրաքանչյուր շրջանավարտին տրվում է 20 րոպե ժամանակ,

2) թեզի բովանդակությունը ներկայացնելուց հետո ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներին հատկացվում է մինչև 30 րոպե՝ շրջանավարտին հարցեր տալու և պատասխաններ ստանալու համար.

3) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր անդամները միաժամանակ լսում են միայն մեկ շրջանավարտի պատասխանը.

4) քննական օրվա տևողությունը չպետք է գերազանցի 8 ժամը:

19. Ամփոփիչ ատեստավորման և մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»՝ ըստ Համալսարանում ընդունված գնահատման 10 բալանոց սանդղակի: Գնահատականները հայտարարվում են նույն օրը, տվյալ խմբի քննության ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո, հանձնաժողովի նախագահի կողմից՝ ողջ խմբի ներկայությամբ:

20. Հիմք ընդունելով սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան առարկայական բանավոր քննությունների և (կամ) մագիստրոսական թեզի պաշտպանության դրական (բավարար, լավ, գերազանց) արդյունքների վերաբերյալ արձանագրությունը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում՝ շրջանավարտին

համապատասխան որակավորում շնորհելու և նրան բարձրագույն կրթության դիպլոմ տալու մասին:

21. Ամփոփիչ ատեստավորումը դրական արդյունքներով հանձնած ուսանողին համապատասխան որակավորում շնորհելու մասին որոշումը կայացվում է ատեստավորման հանձնաժողովի կողմից՝ վերջին քննության կամ թեզի պաշտպանության օրը:

Բացասական (անբավարար) արդյունքի դեպքում ուսանողին որակավորում չի շնորհվում և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:

22. Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը «գերազանց» գնահատականներով հանձնած այն շրջանավարտներին, ովքեր ապահովել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի առնվազը 90 տոկոսը:

23. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի փակ նիստում:

24. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր որոշումները քարտուղարն արձանագրում է: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները: Արձանագրությունները պահվում են Համալսարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետով: Արձանագրության մեջ նշվում են ամփոփիչ ատեստավորման և (կամ) մագիստրոսական թեզերի գնահատականները, տրված հարցերը, հատուկ կարծիքները, շնորհված որակավորումը, աստիճանը, Համալսարանն ավարտողի դիպլոմի տեսակը և արձանագրության օրինակելի ձևում նախատեսված այլ տեղեկատվություն:

25. Ռեկտորի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ հաստատված դիպլոմը տրամադրվում է շրջանավարտին՝ համապատասխան ֆակուլտետի դեկանի կամ դեկանի տեղակալի կողմից՝ վերջին քննությանը հաջորդող տասնհինգ օրվա ընթացքում:

26. Շրջանավարտի երդման արարողությունն իրականացվում է ամփոփիչ ատեստավորման ավարտին հաջորդող Համալսարանի Գիտական խորհրդի նիստի ընթացքում:

Հոդված 4. Ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկումը

1. Ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման հանձնաժողովը նախապես կազմավորվում է ռեկտորի հրամանով, որի կազմում ընդգրկվում են՝

1) ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, որպես հանձնաժողովի նախագահ,

2) քննական հանձնաժողովի անդամ չհանդիսացող Ուսումնամեթոդական վարչության աշխատողը,

3) Համալսարանի Իրավաբանական բաժնի պետը կամ ներկայացուցիչը,

4) Համապատասխան մասնագիտական առարկայի՝ տվյալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամ չհանդիսացող ներկայացուցիչը,

5) Համալսարանի Ուսանողական խորհրդարանի ներկայացուցիչը:

Բողոքարկման ընթացքում բողոքարկման հանձնաժողովի նախագահը հրավիրում է համապատասխան առարկայական քննական հանձնաժողովի նախագահին և անդամներին:

2. **Գործնական ունակությունների ՕԿԿՔ ձևաչափով ատեստավորման դեպքում՝**

1) Շրջանավարտը կարող է բողոքարկել ատեստավորման արդյունքները հայտարարելուց անմիջապես հետո.

2) Բողոքարկման հանձնաժողովը, բողոքարկող շրջանավարտի ներկայությամբ դիտում է ՕԿԿՔ ձևաչափով ատեստավորման տեսաձայնագրությունը և քննարկում շրջանավարտի հետ:

3) Բողոքարկման ընթացքում շրջանավարտը ծանոթանում է ստուգաթերթերին և իր ընտրությամբ բողոքարկում է առարկայի կամ առարկաների կայանի կամ կայանների առաջադրանքների բովանդակությունը և (կամ) գնահատականը:

Բողոքարկման հանձնաժողովի հետ միասին բողոքարկմանը մասնակցում է նաև ամբիոնի վարիչը և տվյալ կայանի կամ կայանների քննող դասախոս(ներ)ը: Բողոքարկման պատճառ հանդիսացած տեխնիկական խնդիրների դեպքում (մուլյաժի, ֆանտոմի կամ քննության ժամանակ կիրառվող գործիքների կամ այլ տեխնիկական միջոցների անսարքության դեպքերում) բողոքարկմանը մասնակցում է Համալսարանի սիմուլյացիոն կենտրոնի ղեկավարը:

Դեղագիտական ֆակուլտետի բակալավրիատի գործնական ունակություններ-ների ատեստավորման փուլի բողոքարկումն իրականացվում է արդյունքները հայտարարելուց անմիջապես հետո՝ կատարված առաջադրանքի ընթացիկ աշխատանքային փուլերի քննարկմամբ՝ բողոքարկման հանձնաժողովի ներկայությամբ:

3. **Շրջանավարտի թեստային քննության գնահատականը կարող է բողոքարկվել թեստավորման քննության ավարտից հետո**:

Թեստային քննությունների գնահատականը բողոքարկվում է Համալսարանի «Բարձրագույն կրթության կազմակերպման մասին» կանոնակարգով սահմանված բողոքարկման սկզբունքներով, համաձայն որի.

1) Շրջանավարտը կարող է բողոքարկել թեստային քննության արդյունքները՝ համապատասխան կնքված թերթիկի վրա բողոքարկվող հարցերը ներկայացնելով քննության պատասխանատուին:

2) Շրջանավարտի դիմումով թեստային քննությունների արդյունքների բողոքարկումն անցկացվում է, երբ շրջանավարտի կարծիքով՝

ա. թեստային հարցն ունի սխալ ձևակերպում,

բ. թեստային հարցը չունի ճիշտ պատասխան,

գ. թեստային հարցն առարկայի ուսումնական ծրագրի շրջանակներից դուրս է,

դ. առկա է ծրագրային համակարգի տեխնիկական անսարքություն:

3) Շրջանավարտը կարող է բողոքարկել թեստային հարցերի առավելագույնը 10 տոկոսը: Բողոքարկման արդյունքում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանգամանք(ներ) հայտնաբերվելու դեպքում շրջանավարտը կարող է բողոքարկել թեստային հարցերի և-ս 10 տոկոսը: Երկրորդ 10 տոկոսի դեպքում նույնպես սխալ հայտնաբերվելու դեպքում շրջանավարտը կարող է բողոքարկել ամբողջ թեստային հարցերը:

4) Բողոքարկման ընթացքում՝ բողոքարկման հանձնաժողովի նախագահի, անդամների և համապատասխան ամբիոնի ներկայացուցչի (ներկայացուցիչների) և շրջանավարտի ներկայությամբ համապատասխան համակարգչի վրա ներկայացվում է շրջանավարտի թեստային հարցերի պատասխանները, որտեղ արտացոլվում է թեստային հարցի ճիշտ պատասխանը և շրջանավարտի կողմից ընտրված պատասխանը:

5) Շրջանավարտը սեղմ ներկայացնում է իր պատասխանի հիմնավորումը, որից հետո համապատասխան ամբիոնի ներկայացուցչի (ներկայացուցիչների) կողմից իրականացվում է բողոքարկվող թեստի սխալ պատասխանի մասին մեկնաբանություն:

6) Բողոքարկման ընթացքին հետևելուց, այդ թվում շրջանավարտին և համապատասխան ամբիոնի ներկայացուցչին պարզաբանող հարցերի պատասխանը ստանալուց հետո բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հետևյալ վերջնական որոշումներից մեկը՝

ա. շրջանավարտի թեստային քննության գնահատականը թողնել անփոփոխ.

բ. շրջանավարտի թեստային քննության գնահատականը բարձրացնել:

7) Բողոքարկման արդյունքում թեստային քննության գնահատականը բարձրացնելու որոշումը տարածվում է միայն բողոքարկող շրջանավարտի նկատմամբ:

8) Բողոքարկման արդյունքում թեստային քննության գնահատականը բարձրացնելու մասին որոշումը արձանագրվում է, որը ստորագրվում է բողոքարկման գործընթացին մասնակցած բողոքարկման հանձնաժողովի անդամների, համապատասխան ամբիոնի ներկայացուցչի և բողոքարկող շրջանավարտի կողմից:

Սույն հոդվածով նախատեսված շրջանավարտի բողոքի բավարարման դեպքում համապատասխան ամբիոնի պատասխանատուն թեստային բազայում կատարում է սխալ կազմված թեստի ուղղում և այդ մասին ամբիոնի վարիչը ներկայացնում է բացատրագիր ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

4. **Ամփոփիչ ատեստավորման բանավոր քննության գնահատականը** (անբավարար, բավարար, լավ, գերազանց) կարող է շրջանավարտի կողմից բողոքարկվել հետևյալ ընթացակարգային կանոններով.

1) Շրջանավարտը կարող է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջել գնահատականի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ:

2) Շրջանավարտն կարող է փաստարկված բողոք ներկայացնել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում:

3) Շրջանավարտն ամփոփիչ ատեստավորման գնահատականի բողոքարկման վերաբերյալ հանձնաժողովի նախագահին դիմում է ամփոփիչ ատեստավորման արդյունքները հրապարակելուց անմիջապես հետո: Բողոքարկման հանձնաժողովի նախագահը քննարկումը կազմակերպում է նույն օրը՝ տվյալ օրվա քննություններն ավարտելուց անմիջապես հետո:

4) Բողոքարկման հանձնաժողովը՝ բողոքարկող շրջանավարտի ներկայությամբ դիտում է բանավոր քննության տեսաձայնագրությունը և քննարկում շրջանավարտի հետ:

5) Բողոքարկման հանձնաժողովը (առանց շրջանավարտի ներկայության) բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա. գնահատականը թողնել անփոփոխ.

բ. գնահատականը բարձրացնել:

5. Բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները:

Հոդված 5. Եզրափակիչ դրույթներ

1. Ամփոփիչ ատեստավորման ժամանակ «անբավարար» գնահատական ստացած կամ չներկայացած և (կամ) մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրված և «անբավարար» գնահատական ստացած կամ չներկայացած շրջանավարտին թույլատրվում է համապատասխան առարկայի չհանձնված փուլերի վերահանձնում և (կամ) նոր թեզի պաշտպանություն՝ հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին, Համալսարանի կողմից սահմանած կարգով և ժամկետներում՝ տվյալ շրջանավարտի ավարտական ուսումնական տարում գործող ամփոփիչ ատեստավորման կանոնակարգին համապատասխան, հետևյալ կարգով.

1) 2020-2021 ուստարվա շրջանավարտների դեպքում՝ երկփուլ (գործնական ունակությունների ատեստավորում, գիտելիքների բանավոր ատեստավորում (3 առարկայի հարցերը մեկ տոմսում)),

2) 2019-2020 ուստարվա շրջանավարտների դեպքում՝ 1 առկա բանավոր փուլով (3 առարկայի հարցերը մեկ տոմսում),

3) 2019-2020 ուստարվան նախորդող տարիների դեպքում՝ եռափուլ (գործնական ունակությունների ատեստավորում, առարկայական համակարգչային թեստային քննություն, առարկայական բանավոր քննություն)՝ ըստ առանձին առարկաների,

4) «Ֆարմացիայի բակալավր» կրթական ծրագրով շրջանավարտի դեպքում՝ միջառարկայական թեստային քննություն:

2. Մագիստրոսական թեզը վերահանձնելու համար շրջանավարտը համապատասխան ֆակուլտետից ստանում է թեզի նոր թեմա և նշանակվում է նոր ղեկավար՝ նոր ուստարվա մեկնարկին:

3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահը ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ռեկտորին է ներկայացնում հաշվետվություն, որը նաև քննարկվում է համապատասխան ֆակուլտետի ուսումնագիտական խորհրդում: Ամփոփիչ ատեստավորումից հետո Համալսարանն ամփոփ տեղեկատվություն է ներկայացնում ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

4. Ամփոփիչ ատեստավորումից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտին 5 աշխատանքային օրվա ընթացքում տրվում է

ակադեմիական տեղեկանք՝ շրջանավարտի կամ նրա լիազորված անձի կողմից Համալսարանի ռեկտորին դիմում ներկայացնելու դեպքում:

5. Ամփոփիչ ատեստավորման որևէ առարկայի քննությունից անբավարար գնահատական ստացած շրջանավարտները հաջորդ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում ատեստավորմանը նախապատրաստվելու նպատակով կարող են կամավոր մասնակցել Համալսարանում վճարովի հիմունքներով կազմակերպվող դասընթացներին (եթե թույլ են տալիս կազմակերպվող դասընթացների ժամկետները), հետևյալ ընթացակարգով.

«Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժիշկ» որակավորման աստիճանի համար.

1) Ներքին հիվանդություններ 6 շաբաթ, այդ թվում՝

- կարդիոլոգիա՝ 2 շաբաթ,
- նեֆրոլոգիա՝ 1 շաբաթ,
- պուլմոնոլոգիա՝ 1 շաբաթ,
- գաստրոէնտերոլոգիա՝ 1 շաբաթ,
- ռևմատոլոգիա՝ 1 շաբաթ,

2) Վիրաբուժական հիվանդություններ՝ 2 շաբաթ,

3) Մանկաբարձություն և գինեկոլոգիա՝ 2 շաբաթ:

«Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ «Բժիշկ ստոմատոլոգ» որակավորման աստիճանի համար.

1) Թերապևտիկ ստոմատոլոգիա՝ 2 շաբաթ,

2) Վիրաբուժական ստոմատոլոգիա՝ 2 շաբաթ,

3) Օրթոպեդիկ ստոմատոլոգիա՝ 2 շաբաթ:

«Ֆարմացիայի բակալավր» և «Ֆարմացիայի մագիստրոս» որակավորման աստիճանի համար.

1) Դեղագործական քիմիա՝ 2 շաբաթ,

2) Դեղագործական տեխնոլոգիա՝ 2 շաբաթ,

3) Դեղագործության կառավարում և էկոնոմիկա՝ 2 շաբաթ:

Սույն մասով նախատեսված յուրաքանչյուր առարկայի 1 շաբաթվա դասընթացի ուսման վճարի չափը 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ է:

6. Ամփոփիչ ատեստավորման ամբողջ ընթացքը տեսաձայնագրվում է, որը Համալսարանում պահպանվում է արդյունքները հրապարակելուց հետո առնվազն 6 ամիս:

7. Ռազմաբժշկական ֆակուլտետից հեռացված շրջանավարտները Ռազմաբժշկական ֆակուլտետում չեն կարող վերականգնվել:

* * *